

Մարտ 22, 1955

Արժանաշնորհ
Տ. Բարբէն ԲՀՆՅ. Մազսուտեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն
Պոսթոն.

Սիրելի Տէր Բարբէն,

Ստացած ենք ամսոյս 12 թուակիր Ձեր նամակը. որով կը հա-
ղորդէիք թէ Ձեր նախագահութեամբ ղումարուած համայնքիդ Միական ժողովը
միաձայնութեամբ հաստատած է Միական Խորհուրդի ներկայացուցած 27 հոգի-
նոց անուանացանկը նոր Եկեղեցւոյ Եինութեան Յանձնախումբին, որուն պաշ-
տօնի վաւերացման պաշտօնագիրը կը խնդրէիք ունենալ կարելի փութով:

Նկատի ունենալով որ յիշեալ Յանձնախումբը բաղկացնող ան-
ձերը կը վայելեն համայնքիդ եւ Միական ժողովի վստահութիւնը իբր եկե-
ղեցասէր, անձնուէր եւ պարտահանաչ անդամներ, զրոյս կը վաւերացնենք
եւ կը հաստատենք անոնց ընտրութիւնը եւ պաշտօնը:

Կ'օրհնենք նոր Եկեղեցւոյ Եինութեան Յանձնախումբի բո-
լոր անդամները եւ վստահ ենք որ անոնք միացնելով իրենց շնորհքը Ձեր
եւ Միական Խորհուրդի անդամներու աշխատանքներուն, պիտի գործեն մեր
ժողովուրդի հոգեւոր օգտին, Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ
փառքին համար:

Մաղթելով ամենքին կար եւ յաջողութիւն ի Տեսաւնէ.

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի